

Հայաստան - Իրան - Յունաստան արտաքին գործոց նախարարներու հինգերորդ հանդիպումը, որ այսօր տեղի պիտի ունենար Թեհրանի մէջ, յետաձգուած է լուսակաւ կողմին առաջարկով:

Կիպրոսի տագնապին լուծման բանակցութիւններուն ներկայ փուլին Յունաստանի արտաքին գործոց նախարար Ճորձ Փափանտրեուի մասնակցութիւնը արգելք հանդիսացած է երեք երկիրներուն արտաքին գործոց նախարարներուն հանդիպումին անոր մասնակցութեան, որուն պատճառով կողմերը յարմար գտած են յետաձգել հանդիպումը:

Միաժամանակ, անփոփոխ մնացած է Եռակողմանի Համագործակցութեան Գործադիր կոմիտէի վեցերորդ հանդիպումը, որ սկսած է այսօր, Թեհրանի մէջ:

## ՀԱՐԻՐԻ. «ՓԱՐԻՉ - 2» ԺՈՂՈՎԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԴԱՐՄԱՆԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երէկ նկատել տուաւ, որ «Փարիչ - 2» ժողովին յաջողութիւնը եւ Լիբանանի նկատմամբ անհրաժեշտ զօրակցութիւնը պիտի նպաստեն՝ դարձանելու տնտեսական տագնապը: Ան նաեւ նշեց, որ Լիբանանի հանդէպ ցուցաբերուած միջազգային զօրակցութիւնը արդիւնք է երկրին մէջ հաստատուած կայունութեան:

Չայնասիոյ հարցադրոյցի մը ընթացքին վարչապետ Հարիրի ընդգծեց, որ մեծ պետութիւններուն մասնակցութիւնը՝ «Փարիչ - 2» ժողովին քաղաքական զօրակցութիւն է՝ Լիբանանի եւ կառավարութեան քաղաքականութեան:

Հարիրի Ֆրանսայի դերակատարութիւնը որակեց սկզբունքային՝ նկատի ունենալով Ֆրանսա - Լիբանան պատմական յարաբերութիւնները:

Վարչապետը ըսաւ, որ 11 Սեպտեմբերէն ետք, Միացեալ Նահանգներու առաջնահերթութիւնները փոխւեցան, եւ թէ Լիբանան մնայուն խորհրդակցութիւններու մէջ է ամբերկացի պատասխանատուներու հետ: «Միացեալ Նահանգներու կեցուածքը Հըզբ-պալլայի նկատմամբ նորութիւն չէ, եւ Ուաշինգթոնը

իր կեցուածքը ճշդօք է 11 Սեպտեմբերէն առաջ. մենք այս հարցով մնայուն կապի մէջ ենք Ուաշինգթոնի հետ», յայտնեց Հարիրի:

Հարիրի նշեց, որ Իսրայէլ ո՛չ միայն մերժեց Պէյրութի արարական վեհաժողովին որդեգրուած նախաձեռնութիւնը, այլ նաեւ՝ խաղաղութեան որեւէ նախաձեռնութիւն, որովհետեւ թէլ Աւիւ կ'ուզէ հաստատել խաղաղութիւն մը՝ իր պայմաններով:

Լիբանան - Սուրիա յարաբերութիւններուն մասին խօսելով՝ Հարիրի յայտնեց, որ Սուրիա վճռորոշ դերակատարութիւն ունեցաւ Լիբանանի միութեան պահպանման մէջ: «Սուրիական ուժերուն ներկայութիւնը կայունութեան գործօն է եւ մենք կը գիտակցինք ատոր կարեւորութեան», աւելցուց ան:

Հարիրի շեշտեց, որ սուրիական ուժերուն ներկայութեան դէմ կան բողոքներ. սակայն Լիբանան ժողովրդավար երկիր է եւ ժողովուրդին մեծամասնութիւնը, այսինքն՝ տարբեր համայնքներու պատկանող Լիբանանցիներուն մեծամասնութիւնը կը զօրակցի սուրիական ուժերուն ներկայութեան:

## ԻՐԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՅ ՄԱԿԻ ԲԱՆԱԶԵԻԸ

Իրաքի խորհրդարանը միաձայնութեամբ մերժեց ընդունիլ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի թիւ 1441 բանաձեւը: Խորհրդարանին 250 պատգամաւորները միաձայնութեամբ որոշեցին չընդունիլ բանաձեւը, զոր պատեւազանի մը նախապատրաստական քայլը նկատեցին: Երեսփոխանները յայտարարեցին սակայն, որ վերջնական որոշումը կու տայ նախագահ Սատտամ Հիւսէյն եւ Յեղափոխական Հրամանատարութեան խորհուրդը:



Իրաքի երեսփոխանները դեմ կը քուէարկեն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի բանաձեւին

ներ կարեւորութիւն նացած ներկայացում չտուին՝ իրաքեան մըն է: Միտայել Տան խորհրդարանին որոշումին՝ զիտել տալով, ամէն մարդ ալ գիտէ, որ անիկա բեմակա- Ծար.՝ էջ 10

## ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՍԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ

Ապահովութեան Կեդրոնական խորհուրդը երէկ որդեգրեց ապահովական միջոցառումներ, որոնք գործադրութեան պիտի դրուին այսօրուրէն սկսելու եւ պիտի ամբողջանան 48 ժամուան ընթացքին:

Ապահովական Կեդրոնական խորհուրդը նաեւ տուաւ որոշումներ, որոնք կը նպատակաւորեն ուժեղացնել եւ վերակազմակերպել պայքարը՝ ինքնաշարժներու գողութեան եւ թմրեցուցիչներու առևտուրին դէմ:

Խորհուրդին ժողովին նախագահեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըր. ներկայ գտնուեցան վճարելի ատենանի ընդհանուր դատախազ Ատնան Ատտուվ, Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան ընդհանուր տնօրէն Ժէմիլ Սէյիտ, ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Մարուան Չէյն, բանակի սպայակոյտի փոխ հրամանատար Կոր. Հիւսէյն Շահին, գաղտնի սպասարկութեան ընդհանուր տնօրէն Կոր. Ռեմոն Ալար եւ Պէյրութի նահանգապետ Եագուպ Սարրաֆ:

Ժողովին նաեւ մասնակցեցան Լիբանանի մէջ գործող սուրիական ուժերու պատասխանատուներէն՝ Կոր. Մոհամէտ Խալուֆ եւ պետութեան ապահովութեան սպասարկութեան ընդհանուր տնօրէնին ներկայացուցիչը:

## ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԵՐ. ԴՈՎՏ. ՓՈԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆԻ ՀԵՏ

ԷԶ 4

## ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ ԴՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ ԿԸ ԳՏՆԵ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՌՆՉԱԿԻՑ ԿՈՂՄԵՐՈՒՆ ՄՕՏ

Կիպրոսի հարցին լուծման համար ՄԱԿի խաղաղարար մէկ ծրագիրը երէկ Կորակցութիւնի ապահոված է Թուրքիոյ երեսփոխանական ընտրութիւններէն յաղթական դուրս եկած կուսակցութեան ղեկավարին կողմէ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Բոֆի Անանի կողմէ յայտարարուած ծրագիրը կ'առաջադրէ 30 տարիէ ի վեր բաժնուած յոյն եւ թուրք համայնքները վերամիացնելու ստեղծելով Զուլթերիոյ ոճով կառավարութիւն մը՝ իշխանութեան լայնա-

ծիր եւ գործօն բաժնեկցութեամբ:

Ծրագիրին նպատակը բաժնուած կողմերին երկու կողմերուն միջեւ «քաղաքական հաւասարութեան» յարաբերութիւններուն ստեղծումն է՝ միաժամանակ յարգելով խաղաղ արեւելեան Միջերկրականի մը մէջ «Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ հաւասարակշռութիւնը»:

Ծրագիրը կ'առաջադրէ ստեղծել վեց անդամնոց նախագահական խորհուրդ մը՝ հերթաբար փոխառող նախագահութեամբ մը, իբրեւ միակ պե-

տութեան կառավարութեան գործադիր իշխանութիւն:

Խորհուրդին նախագահը հերթաբար պիտի փոխուին իւրաքանչիւր 10 ամիսը անգամ մը՝ յոյն կիպրական եւ թուրք կիպրական կողմերուն միջեւ:

Կողմին երկու համայնքներէն, անոնց

Ծար.՝ էջ 10

## ԻՐ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՄՆՅՈՒՅԱԾ «ԿԱՊՈՅՑ ՀՈՍԱՆՔ» ԿԱԶՄԱՐԸ ՅԱՌԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԵ ԱՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ

ԷԶ 6

## ԿԻԼԻԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՆՉԵՐԸ ԿԵՆԴԱՆԻ ՎԿԱՆԵՐԸ ՀԱՅՈՒ ՀԱՒԱՏՔԻՆ

ԷԶ 5

## ՊԱՂԵՍՏԻՆ ՑԻՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՍԿԶԲԵԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԷՍԻՆ



Իսրայէլացի զինուորները գործոց կը վերադառնան Թուրքարմի եւ Նապուսի մէջ իրենց գործած ոճիրներէն ետք

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ յայտարարեց, որ պաղեստինցիները սկզբնական համաձայնութիւն մը տալու պատրաստ են խաղաղութեան քարտէսին, որ կը

հովանաւորուի Միացեալ Նահանգներուն կողմէ: Արաֆատ, որ կը խօսէր ռուս պատուիրակ Անտրէյ Վտովինի հետ ունեցած տեսակցութեան աւարտին, ըսաւ, որ պաղեստինեան իշխանութիւնը պիտի խորհրդակցի արաբներուն հետ՝ վերջնական ու ամբողջական պատասխան տալէ առաջ: Վտովինի հետ տեսակցութեան

պահուն, Իսրայէլի մէջ իսրայէլացի պաշտօնատարներու հետ հանդիպումներ կ'ունենար Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն Տէյվիտ Սաթրեֆիտ: Աւելի ուշ ան հանդիպումներ պիտի ունենար նաեւ պաղեստինցի պաշ-

Ծար.՝ էջ 10

## ՕԹԱՆԻ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐՈՒՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԶԻ ՎՆԱՍԵՐ ԶԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԻԱ ԿԱՊԵՐՈՒՆ

Երէկ Երեւանի մէջ իր աշխատանքներուն սկսաւ ՕԹԱՆԻ «Գործընկերութիւն Յանուն Խաղաղութեան» ծրագիրին «Համագործակցութիւն» Լաւոյոյն Չանք - 2003» ռազմափորձերուն միջոցով: Անոր կը մասնակցին 17 երկիրներու ռազմական կառոյցներ:

Ծար.՝ էջ 3

«Փիցցա ՉԱՐԹ» ՃԱՇԱՐԱՆՆԵՐԸ ԹԻՐԱԽ

ՀԱՐԵԹ ՍԱԽՐԻ, ՂԱԶԻՐԻ ԵՒ ԹՐԻՓՈԼԻՒՄԵՋ ՊԱՅԾՈՒՄՆԵՐ

Երեկ առաւօտեան կանուխ ժամերուն Հարեթ Սախրի, Ղազիրի եւ Թրիփոլի մէջ պատահեցան պայթումներ, որոնց թիրախ հանդիսացան «Փիցցա Հարթ» ճաշարաններուն երեք մասնաճիւղերը:

Ամէնէն ուժեղ պայթումը պատահեցաւ Թրիփոլի մէջ, ուր առաւօտեան ժամը 4:30ին «Փիցցա Հարթ»-ի բոլոր ցուցափեղկերուն ապակիները փշրուեցան:

Նոյն ժամերուն երկու այլ ուժեղ պայթեցան Մասնաբլթեյի մայրուղիին վրայ գտնուող «Փիցցա Չարթ» ճաշարանին եւ անոր դիմաց գտնուող «Տիւրքի» ճաշարանին առջեւ:

Թրիփոլի մէջ պայթումին վայրը այցելեց Կիււորական ատեանին մօտ կառավարութեան ներկայացուցիչ դատախազ Մարուն Չախուր, ինչպէս նաեւ ներքին ապահովութեան ուժերու հիւսիսի հրամանատար Կոր. Խրատըր Բալէյի:

Չախուր յայտնեց, որ Թրիփոլի եւ ժուլիէի շրջաններուն մէջ միեւնոյն ժամուն պատահած են պայթումները: Ան ըսաւ, որ Թրիփոլի մէջ վետեղուած ուժերը 400 կրամ կը կշռէր: Ան նշեց, որ հետաքննութեան աշխատանքները սկսած են եւ յոյս յայտնեց, որ անոնք դրական արդիւնքներու կը հասնին:

Շարք՝ էջ 3

ՊԸՐՐԻ ԵՒ ՄԸՐ ԲԵՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԿԻՐԸ ՅՈՒՋՈՂ ՀԱՐՅԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի երեկ ընդունեց ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըրը, որուն հետ քննարկեց ընդհանուր հարցերը:

Պրրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան գործավար Քարոյ Քալիլը, Միջազգային Բարգաւաճման Ամերիկեան Գործակալութեան Լիբանանի բաժանմունքի տնօրէն Ռաուֆ Եուսէֆը եւ խորհրդարանի արտաքին հարցերու ընդհանուր քարտուղար Պիլալ Շարարան: Հանդիպումին լիբանանեան խորհրդարանին եւ նշեալ գործակալութեան միջեւ փոխհասկացողութեան համաձայնութիւնը երկարատեւեցաւ մինչեւ Մարտ 2004՝ բարելաւելու համար լիբանանեան խորհրդարանին սահմանադրական, վարչական եւ արհեստագիտական կարողութիւնները:

Պրրիի այցելեցին Հիւսիսի փաստաբաններու սենտիքայի նախագահ Խալոսն Նաժար եւ սենտիքայի անդամները:

Պրրի նաեւ ընդունեց օդաչուներու սենտիքայի նախագահ Մահմուտ Հումանին, որ ներկայացուց օդաչուներու պահանջները: Պրրի անմիջապէս հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ «Միտլ Իսթ» օդանաւային ընկերութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Հուրի հետ եւ պահանջեց հարցերը տեղւոյն վրայ լուծել:

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Նուպար Մելիքեան եւ զաւակունք
  - Տէր եւ տիկին Անդրանիկ Մելիքեան եւ զաւակունք
  - Տէր եւ տիկին Նուպար Թաւուքեան եւ զաւակունք
  - Տէր եւ տիկին Թաւուքեան եւ զաւակունք
  - Տէր եւ տիկին Սուրէն Օվիկեան եւ զաւակունք
  - Վանյեան ընտանիք
  - Տէրտէրեան ընտանիք
  - Ասատուրեան ընտանիք
  - Մահաբեկեան ընտանիք
  - Շիրանեան ընտանիք
  - Աթոյեան ընտանիք
  - Քէչեքեան ընտանիք
  - Տուտազեան ընտանիք
  - Ալվազեան ընտանիք
  - Թէքէրեան ընտանիք
  - Փոլատեան ընտանիք
  - Խրատըրեան ընտանիք
  - Պաղտատեան ընտանիք
  - Արրահամեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գլուխը իրենց մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, գործնչին եւ հարազատին՝

ԼՈՒՍՆԹԱԳ ՄԵԼԻՔԵԱՆԻ (Ծնեալ Խարբերդ, 1924ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 11 Նոյեմբեր 2002ին առաւօտեան ժամը 2:30ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 11 Նոյեմբեր 2002ին, Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազո:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Անդրանիկ Մելիքեանի բնակարանը, Չորեքշաբթի 13 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 5:00էն 9:00:

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ ԿԵՆՍԱԿԱՆ Է

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՄ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երեկ յայտնեց, որ կը վստահի դատական իշխանութեանց արդարութեան եւ անկախութեան՝ շեշտելով անոնց կենսական դերը. պաշտպանելու համար օրէնքի եւ հաստատութեան կառուցումը:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ պետութիւնը չի գոյատեւեր, եթէ իր բոլոր հաստատութիւնները միասնական չեն եւ օրէնքները չեն կիրարկուիր՝ նկատել տալով, որ դատական իշխանութիւններուն պատասխանատուութիւնը կենսական է, որպէսզի լիբանանցիները կարենան վստահիլ իրենց պետութեան՝ ի մտի ունենալով, որ կան մարմիններ, որոնք տէր կը կանգնին իրենց իրաւունքներուն եւ օրէնքներուն գործադրութեան:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ դատական իշխանութեանց չարիք հասցնելը հայրենիքին եւ անոր սահմանադրական հաստատութիւններուն չարիք հասցնելը նշանակէ եւ կը սպառնայ երկրին վարչակարգին: Նախագահ Լահուտ շեշտեց, որ ռեւէ անհատ կամ որեւէ փորձ դատական իշխանութեանց պատկերը աղտաւղելու՝ իր դէմը պիտի գտնէ պետութիւնը:

Նախագահը կոչ ուղղեց բոլոր դատա-



Զօր. Լահուտ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի Գերկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրայի հետ քննարկեց շրջանային քաղաքական բեմը յուզող հարցերը

խաղներուն՝ խիղճով իշխելու եւ նեցուկ կանգնելու օրէնքին՝ որեւէ որոշում տալու պարագայի. ինչպէս նաեւ՝ քայլ պահելու քարաւաճման եւ արդիականութեան հոլովոյթին հետ:

Նախագահ Լահուտ նշեալ յայտարարութիւնները կատարեց Պաապտայի մէջ արդարութեան նախարար Սամիր Շըպըր, դատական իշխանութեան գերագոյն խորհուրդի դատախազ Թանիոս Խուրի եւ խորհուրդին ութ անդամները ընդունած ժամանակ: Տղատախաղները իրենց երդումը կատարեցին նախագահ Լահուտի ներկայութեան: Հանդիպումին ներկայ էր նաեւ ընդհանուր դատախազ Ատնան Ատտուլ:

Նախագահական պայտի հիւրերէն էին նաեւ նախկին վարչապետ Սելիմ Հըս, որ նախագահ

Լահուտի հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երկրի տնտեսական կացութիւնը:

Նախագահ Լահուտ ընդունեց ճարտարարէւստի նախարար Ալի Քանսոն, որուն հետ քննարկեց ընդհանուր հարցեր, յատկապէս «Միտլ Իսթ» օդանաւային ընկերութեան օդաչուներուն հարցը. ինչպէս նաեւ՝ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին առնչուած հարցեր:

Նախագահ Լահուտի այցելեցին նաեւ հարաւի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրա եւ Ֆրանսախօս երկիրներու Կազմակերպութեան մէջ նախագահ Լահուտի ներկայացուցիչ Շարլ Ռոպը:

**ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՔԱՄԻՆ**  
● Պուրճ Համուտ, «Արմենիա» պողոտայ, Քաղաքապետարանի մօտ, Ա. Երկ, գրասենեակի կամ դարձմանտան յարմար: Ըն. 01-256015:

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Կարպետ ոսկերիչ մը (ստեղծ): Դիմել հեռ. 03-719404, պրն. ժոզէֆին:

**ԿՈՒՉՈՒԻ**  
● Արական հագուստի վաճառատան մը մէջ վաճառող փորձառու օրիորդ մը: Ըն. 03-821600:

**ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՔԱՄԻՆ**  
● Սրահի շրջան, «Կարին 1», 240 քառ. մետր տարածութիւն, գեղատեսիլ դիրք, լողազանգ, յարմար գին: Ըն. 03-627469:

**ՁԵՅՈՒՆԻ ԲԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՍԿԻՆ ԽԱՉՔԱՐԻ ՁԵՏԵՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Ուրախութեամբ կը յայտնենք, ընդհանրապէս մեր ժողովուրդի զաւակներուն եւ մասնաւորաբար զԵթովպիայի հայրենակիցներուն որ, Կիրակի, 24 Նոյեմբեր 2002ին, Աճախիսի մայրավանդէն մերս, պատարագի աւարտին տեղի պիտի ունենայ հոգեհանգիստ Արծնեթոյն Ձէթովնի նահատակներու հոգւոյն, ապա՝ յաջարի զետեղման արարողութիւն:

Խաչքարը նուիրուած է Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՍ Ա. կաթողիկոսին, Ձէթովնի Հայրենակցական Սիոնեան կողմէ, ի յիշատակ Ձէթովնի քաջամարտիկներուն:

Այս արարողութեան հրահրուած են մեր ժողովուրդի զաւակներն ու հայրենակիցները:

**ՁԵՅՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ «ARMENIA: GENOCIDE DENIED»**

Վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւն

Սփռուած՝ Աւստրալիոյ պետական «SBS» պատկերասփիւռի կայանի «DATELINE» հաղորդաշարէն:

Ցուցադրութենէն ետք խօսք կ'առնէ ֆիլմի հեղինակ՝ **MATTHEW CARNEY**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Նոյեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան - Շ.Ա.Ը.Ս.» մարզադաշտակալային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

**ՇՐԱԽԵՐ**

ՀԱՐԻՐԻ ՇԻՐԱՔԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ «ՓԱՐԻՉ-2»Ի ԿԱՊՈՒԱԾ ՀԱՐՅԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ Փարիզի մէջ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի հետ քննարկեց «Փարիչ-2» ժողովին առնչուած հարցերը:

Հարիրի ժողով մը գումարեց նաեւ «Փարիչ-2»-ի կազմակերպական աշխատանքի պատասխանատու Միշէլ Քանտիսիէնի հետ: Ժողովին մասնակցեցան Ֆրանսայի գանձարկղի տնօրէն Ժան Փիեռ Ժոլին, ինչպէս նաեւ ֆրանսացի բարձրաստիճան պաշտօնատարներ ու դիւանագետներ: Լիբանանեան կողմէն ներկայ էին Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ, վարչապետ Հարիրիի եւրոպական հարցերու խորհրդական Պասիլ Եարէտ եւ

Շարք՝ էջ 3

ՖԱՐԷՍ. «ՓԱՐԻՉ-2» ԺՈՂՈՎԸ ՏԵՂԻՆ Է

Փոխ վարչապետ Խամ Ֆարէս երեկ յայտարարեց, որ «Փարիչ-2» ժողովին նախաձեռնութիւնը տեղին է: Ան դրուատեց բոլոր ջանքերը եւ իրագործումները, որոնք կը միտին բարելաւել Լիբանանի տնտեսական վիճակը:

Ֆարէս նկատել տուաւ, որ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք եթէ ապահոված չլըլար ժողովին յաջողութիւնը, կոչ չէր ուղղեր կայացրնելու պայն եւ չէր հովանաւորեր պայն:

Ֆարէս նշեց նաեւ, որ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ եւ վարչապետ Ռաֆիք Հարիրի իրենց կարելին կ'ընեն չեղոքացնելու համար ժողովուրդին մօտ տնտեսական կացութեան ստեղծած երկիւղներն ու մտահոգութիւնները:

Ֆարէս դրուատեց նաեւ խորհրդարանին կեցուածքը, ինչ կը վերաբերի կառավարութեան ներկայացուցած ծրագիրներուն գործադրութեան:

ԲՆԱԿԵՑՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Ընկերային հարցերու պետական նախարար Ասատ Տիպա երեկ նախագահեց «Ռիվիերա» պանդոկին մէջ Ֆրանսախօս երկիրներու Կազմակերպութեան բնակեցման հարցերու յատուկ 27րդ խորհրդաժողովին բացման նիստին:

Այս առիթով Տիպա յայտարարեց բնակեցման նոր ծրագիր վը, որ կը վերաբերի սահմանափակ եկամուտով ընտանիքներուն:

Ծրագիրին հիմամբ, առանց առաջին վճարումի բնակարաններ պիտի շնորհուին եւ տան վարձքը պիտի համեմատեցուի ենթակային դրամական մուտքին հետ պայմանաւ, որ վարձքերը չզերապայտեցնու մուտքին 20 առ հարիւրը:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է Հ. Յ. Դ. ԼԵՍԻ

2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅԸ

**Հ. Յ. Դ. ԼԵՍ. 30ամեակ**

1973 2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ







# Միջապալին Քաղաքական Կեանք

## ՊՐԱԶԻԼԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒԼԱՅԻ ԳԻՄԱԳՐԱԿԱԾ ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐԸ



Պրազիլի ձախակողմեան նախագահ Լուիս Իկ-նասիո Լուլա Տա Միլիվա նախագահական իր պաշտոնը կը ստանձնէ ոչ այդքան բարեգուշակ պայմաններու մէջ: Թէեւ Պրազիլ աշխարհի 6րդ մեծագոյն տնտեսութիւնը ունի, սակայն, միւս կողմէ, անոր վրայ բարդուած է աշխարհի ամէնէն մեծ պարտքերէն մէկը՝ շուրջ 260 միլիարտ տոլար:

Ազատ շուկայի վերաբերեալ պահպանողական քաղաքականութիւնը, գոր կերպով անհաշիւ նախագահ Ֆեռնանտո Էնրիքէ Քարտոզա, չէ յաջողած Պրազիլը դուրս բերել հետզհետէ սրող տնտեսական տագնապէն, հակառակ այն իրողութեան, որ այդ քաղաքականութիւնը խորքին մէջ արտայայտութիւնն էր Միջազգային Դրամական Ֆոնտի դրամատէրերու կամքին: Քարտոզայի իշխանութեան օրերուն անգործներուն տոկոսը կրկնապատկուելով հասաւ 8,2 առ հարիւրի: Կ'ակնկալուէր, որ տնտեսութիւնը օգտուի ազատ շուկայի քաղաքականութենէն, սակայն փոխառութեան տոկոսներու արձանագրած հսկայական բարձրացումը անկարելի դարձուց տնտեսական որեւէ երկարաժամկէտ շահարկումը: Կարճ տեւողութեան վրայ կատարուած ներդրումները բաւարար չէին կայունացնելու տնտեսութիւնը մը, որ երկարաժամկէտ շահարկումներու եւ գործարարներու վստահութեան կը կարօտի:

Ընտրական երկրորդ փուլին Լուլայի համոզիչ յաղթանակին պատճառները իր խոստումներն էին, որոնք թէեւ խոտոր կը համեմատէին Միջազգային Դրամական Ֆոնտի յանձնարարութիւններուն, այսուհանդերձ համոզիչ թուեցան փողովուրդին: Տարբեր առիթներով Լուլա յայտարարած է, թէ աշխատանքի տեղեր պիտի ստեղծէ, աղքատներուն հողային տարածքներ պիտի յատկացնէ, նեցուկ պիտի կանգնի կաղացող ճարտարարուեստներու, առողջապահական եւ կրթական համակարգներուն համար դրամ պիտի ապահովէ եւ տուրքերը պիտի պակսեցնէ: Արտաքին պէտք, այս բոլորը կը կարօտին նիւթական հսկայ գուժարներու, գորս Պրազիլ չունի: Հետեւեալը Լուլա դատապարտուած է իր իշխանութեան առաջին օրերէն իսկ կամ իրեն թուէր կողմերը յուսախաբ ընել, կամ հարցեր ստեղծել Միջազգային Դրամական Ֆոնտին եւ շահարկումներ կատարողներու հետ:

Պրազիլի տնտեսական դժուարութիւններուն առանցքը կը կազմէ հարստութեան խիստ անհասարակ բաժանումը: Պրազիլի հարուստ փոքրամասնութիւնը շատ հարուստ է, իսկ երկրին բնակչութեան ջախջախիչ մեծամասնութիւնը՝ շատ աղքատ: Եթէ Լուլա գտնէ ձեռք Պրազիլի աւանդական տէրերը հակաշահութիւնը, զարգացած եւ ուսեցած միջակ խաւին աջակցութիւնը պահպանելու եւ միաժամանակ միլիոնաւոր աղքատներու տուած իր խոստումներէն գէթ մաս մը իրագործելու, ապա ան հաւանաբար կարենայ օտարերկրացի շահարկողներու հետ լեզու գտնել:

Լուլայի սպառնացող մեծագոյն վտանգը կը գայ Պուլի վարչակարգէն, որ հաշտ աչքով պիտի չնայի ընկերվարական մը կատարելիք փոփոխութիւններուն: Սակայն եթէ Լուլա յաջողի բարեկարգումի իր ծրագրերը ներկայացնել իրեն հաւասարապէս ընկերային եւ տնտեսական զարգացումը գոհացուցիչ նախագիծ, ապա հաւանաբար կարելի է Ուաշինգթոնը հակակռուել: Հարցը այն է, որ եթէ Պրազիլի նոր վարչակարգը որոշ գումարներու ստեղծում եւ հողերու սեփականազրկում կատարէ, այդ մէկը ոչ միայն պիտի խրախուսէ օտարերկրացի շահարկողները, այլ նաեւ կրնայ օգտագործուիլ Լուլայի հակառակորդներուն կողմէ՝ սահմանադրական օրէնքի մը հիմամբ Լուլայի հրաժարումը պահանջելու համար:

Սակայն նոյնիսկ եթէ Լուլայի իշխանութիւնը ձախողութեան դատապարտուած կամ կարճատեւ ըլլայ, իրողութիւնը կը մնայ անփոփոխ. երկրին մեծահարուստները պէտք է իրենց տնտեսական գերակայութիւնը պահեն: Իրեքայնորդ նախագահներ ձախողած են այս մէկը իրագործելու, սակայն թերեւս ձախակողմեան Լուլա կարենայ կատարել այդ մէկը: Բայց ժամանակը անոր կողքին չէ, հետեւեալը ան պէտք է շարժի արագ եւ հաստատ քայլերով:

# ԻՐ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՐԱՆՅՈՒՑԱԾ «ԿԱՊՈՅՏ ՀՈՍԱՆՔ» ԿԱԶՄՏԱՐԸ ՅԱՌԱՋԽԱՂԱՅՔ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ ՌՈՒՍ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Ռուսական բնական կազը թուրք սպառողներուն հասցնելու նպատակով մէջտեղ եկած «Կապոյտ Հոսանք» կազատարի ծրագրերին կառուցումը վերջ գտաւ 20 Հոկտեմբերին: Սակայն թուրք տնտեսագէտները աւելի նուազ գրաւելու եւ նուազ հակասական պատկեր մը տուին կազատարին, քան ինչ որ էր ծրագրերը «ծնած» օրերուն:

Ծրագիրը ֆինանսաւորող ռուսական «Կազփրոմ» ընկերութիւնը աւելի նուազ քանակութեամբ կազ պիտի արտադրէ, քան նախնական ծրագրերը: Ըստ «Կազփրոմ»-ի, կազատարը 4 միլիարտ խորանարդ մեթր կազ փոխադրելու կարողանալու թիւն ունի եւ մինչեւ 2007 թուական անիկա 16 միլիարտ խորանարդ մեթր կազ հասցուցած պիտի ըլլայ Անգարա: Սակայն անոր հետ կապուած հեռանկարները կը ճատուցանեն:

Ծրագրերը տնտեսական հարցերը պատճառ դարձած են, որ երկրորդ 4էն 2 միլիարտ խորանարդ մեթրի նուազեցնել 2003ի իր գնելիք բնական կազին քանակը: Յստակ չէ տակաւին, թէ «Կապոյտ Հոսանք»-ի հեռանկարներուն կրճատումը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ յառաջատակէն: 20 Հոկտեմբերին թրքական Սամսոն քաղաքին մէջ ռուսները նախարար Ջեքի Սաքաւին կողմէ կազատարին միացման խորհրդանշական արարողութիւնը նշեց ամբողջացումը ծրագրի մը, որ ուղղակի կը համարէին երկու երկիրներուն միջեւ թշնամութեան ճշմարտութիւնը:

Ռուսական տնտեսութեան զարգացման եւ թրքական շուկային բաւարարման: Ռուսիոյ լեռնային շրջաններէն անցնող կազատարին երկու քիլոմետր բաժնիին ամբողջացումէն ետք, կազատարին փորձարկումը պիտի կատարուի Դեկտեմբերի կէսերուն: Ըստ «Կազփրոմ»-ի, կազատարը 4 միլիարտ խորանարդ մեթր կազ փոխադրելու կարողանալու թիւն ունի եւ մինչեւ 2007 թուական անիկա 16 միլիարտ խորանարդ մեթր կազ հասցուցած պիտի ըլլայ Անգարա: Սակայն անոր հետ կապուած հեռանկարները կը ճատուցանեն:

Ծրագրերը տնտեսական հարցերը պատճառ դարձած են, որ երկրորդ 4էն 2 միլիարտ խորանարդ մեթրի նուազեցնել 2003ի իր գնելիք բնական կազին քանակը: Յստակ չէ տակաւին, թէ «Կապոյտ Հոսանք»-ի հեռանկարներուն կրճատումը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ յառաջատակէն: 20 Հոկտեմբերին թրքական Սամսոն քաղաքին մէջ ռուսները նախարար Ջեքի Սաքաւին կողմէ կազատարին միացման խորհրդանշական արարողութիւնը նշեց ամբողջացումը ծրագրի մը, որ ուղղակի կը համարէին երկու երկիրներուն միջեւ թշնամութեան ճշմարտութիւնը:

Ծրագրերը տնտեսական հարցերը պատճառ դարձած են, որ երկրորդ 4էն 2 միլիարտ խորանարդ մեթրի նուազեցնել 2003ի իր գնելիք բնական կազին քանակը: Յստակ չէ տակաւին, թէ «Կապոյտ Հոսանք»-ի հեռանկարներուն կրճատումը ինչ ազդեցութիւն պիտի ունենայ յառաջատակէն: 20 Հոկտեմբերին թրքական Սամսոն քաղաքին մէջ ռուսները նախարար Ջեքի Սաքաւին կողմէ կազատարին միացման խորհրդանշական արարողութիւնը նշեց ամբողջացումը ծրագրի մը, որ ուղղակի կը համարէին երկու երկիրներուն միջեւ թշնամութեան ճշմարտութիւնը:

Լի մակարդակներու: Արդէն իսկ թուրքիա իր բնական կազին երկու երրորդը կը ստանայ Ռուսիայէն, եւ «Կապոյտ Հոսանք» ծրագրերը աւելիով պիտի շեշտէ Ռուսիայէն անոր կախեալ ըլլալը:

Սակայն վերջին տարիներուն թուրքիա կը ջանայ տարբեր ուղղութիւններով աշխատիլ ինքզինք վերածելով կասկածի դեմքի քարտէսի ու կազը դէպի Եւրոպա հասցնող «ցրուելի» մը: Ան կը մասնակցի ազդու պայմանագրի Եւրոպայի հետ (24 Յունիսին երկու երկիրներուն միջեւ ծագած հարցերու պատասխանումը համար կազի հայթայթումը 2001 Դեկտեմբերին գործարկման դրուած կազատարի մը համար) (24 Յունիսին երկու երկիրներուն միջեւ ծագած հարցերու պատասխանումը համար կազի հայթայթումը դարձեց ցրուեցաւ իրանի կողմէ):

Թուրքիա նաեւ բնական կազ կը գնէ Ալճե-րիայէն եւ Եգիպտոսէն՝ յաճախ առեւտրական «խաղերով» գեղջ պահահո-վելով: Տեղեկութիւններու համաձայն, թուրքիա 9 տոկոսի գեղջ ստացաւ «Կազփրոմ»էն եւ կարծիք քանակութիւններ վարեց թեհրանի հետ՝ 2006ին աւարտող թուրքիոյ վրայ, որ կրնայ հասնիլ անսանձե-

նախնական խոստումներուն համաձայն, թուրքիոյ պահանջը աճ չարձանագրեց, «Կապոյտ Հոսանք»-ին գոյութիւնը մտահոգութիւն պատճառած է շրջանի հայթայթումը ներքին, որոնք կը վախնան, թէ այս վերջինիս անյազութիւնը կրնայ իրենց գիններուն անկում պարտադրել:

Ներքին առումով, այդ ծրագրերը նաեւ լուրջ հակասութիւններ յառաջացուցած է, որոնք աւարտած են առանց հաստատ որոշումներու կայացման: 1997ին Մետաթ Երլմազ (որ օրին վարչապետ էր) ստորագրեց «Կապոյտ Հոսանք»-ին նախնական համաձայնութիւնը եւ շատ մը ամբաստանութիւններ դիմադրուեց, որոնք պատճառ դարձան անոր կառավարութեան տապալումին:

Այդ առկախ մնացած ամբաստանութիւններուն համաձայն, Երլմազի Մայր Հայրենիք կուսակցութիւնը, որ կը վայելէր առեւտրական մեծ ընկերակցութիւններու նեցուկը, քաջալիրեց «Կապոյտ Հոսանք»-ի ծրագրի իրագործումը յառաջ քշելու համար Ռուսիոյ հետ տնտեսական կապեր ունեցող ընկերութիւնները: Վրաստանի վրայով աւելի կարճ գիծ մը շրջանակներ հարցին ոչ մէկ համոզիչ պատասխան տրուեցաւ: Հիմա, որ թուրքիա որոշ վերապահութիւն կը ցուցարե-

րէ ծրագրերին նկատմամբ, այդ համաձայնութեան պատշաճութեան մասին հարցադրումները կրնան անգամ մը եւս սեղանի վրայ դրուիլ:

Ծրագրերին շուրջ հակասութիւնները կրնան մեղմացած թուիլ, սակայն անոնք անպայմանօրէն չեն լուծուած: Այսուհանդերձ թուրքիա կը փորձէ բնական կազ ստանալ քանի մը հայթայթողներէ՝ ամբողջովին Ռուսիայէն կախեալ չըլլալու համար: Համաձայնութիւնը գոյացուցած կառավարութիւնը արդէն լուծուեցաւ եւ թուրք-ռուսական յարաբերութիւնները կը զարգանան տարբեր ճակատներու վրայ:

Այլ խօսքով, «Կապոյտ Հոսանք»ը անկասկածօրէն զարկ պիտի տայ թուրք-ռուսական յարաբերութիւններուն, սակայն անիկա թուրք-ռուսական համագործակցութեան նոր էջ մը չի նշեց անպայման, ինչպէս շատեր ենթադրած էին: Գործնականօրէն կազատարի գետնուման փուլը արդէն ամբողջացած է, առանց բարդութիւններու: Սակայն պէտք է համբերեք եւ տեսնեք, թէ գործադրութեան փուլն ալ նոյն անդորրով կ'աւելնի անցնի՝ կամ ոչ:

ՄԵԼԻՆԻԹ ՔԱԹԻՔ «Եւրոպայի հարց» կայք

### ԹՈՒՐԵՒՈՅ ՇՈՒՐՋ

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ ԸՆԴՅԱՏԱԿԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Անգարայի Պետական անվտանգութեան դատարանը թուրքիոյ մէջ գործող գերմանական որոշ հաստատութիւններ ամբաստանած է «թրքական պետութեան անվտանգութեան դէմ ընդդէմ արտապատկառ զործուելու» թիւն ունի եւ մինչեւ 15 տարուան բանտարկութեան վճիռ պահանջած է այդ հաստատութիւններուն պատասխանատուներուն եւ անոնց թուրք գործակիցներուն համար:

«Բոնրատ Ատանէօր» հիմնարկի թուրքիոյ ներկայացուցիչ Ռոյֆ Շոն-պիլի, «Հէյնրիխ Պոլի» հիմնարկի թուրքիոյ ներկայացուցիչ Ֆիլիպ Զաթմա Ուրուր, «Յրետերիք էպլըթ» հիմնարկի տնօրէն Հանս Շումպերը եւ «Յրետերիք Համան» հիմնարկի թուրքիոյ ներկայացուցիչ Վոլֆկանկ Սաքաւինը օտար ամբաստանուած են պետութեան անվտանգութեան դէմ գաղտնի համագործակցութեամբ, ըստ թուրքիոյ քրէական օրէնսգիրքի 171րդ յօդուածին: 72 էջ ամբաստանագիրը պատրաստած է Անգարայի Պետական անվտանգութեան ատենակի նախկին դատախազը, որ վերջերս իր պաշտօնէն արձակուած էր սեռային գաղթականութեան մը պատճառով: Նշեալ հաստատու-

թիւններու պատասխանատուներու կողքին, ամբաստանուած են նաեւ Եգիպտոսի Պերլա մարտիկ կազմակերպիչները եւ հոն հանքագործութեամբ զբաղող միջազգային ընկերութեան մը պատասխանատու Օքթայ Բոն-հար, նշեալ գիւղին գերդապետը՝ Սաֆա Թաստարուան բանտարկութեան վճիռ պահանջած է այդ հաստատութիւններուն պատասխանատուներուն եւ անոնց թուրք գործակիցներուն համար:

«Գերմանական քաղաքական հիմնարկներու պատուիրուած է մեր երկրին ամբողջականութեան եւ աշխարհիկ կարգերուն դէմ գործունէութիւն տանիլ, որուն պիտի, «Հէյնրիխ Պոլի» հիմնարկի թուրքիոյ ներկայացուցիչ Ֆիլիպ Զաթմա Ուրուր, «Յրետերիք էպլըթ» հիմնարկի տնօրէն Հանս Շումպերը եւ «Յրետերիք Համան» հիմնարկի թուրքիոյ ներկայացուցիչ Վոլֆկանկ Սաքաւինը օտար ամբաստանուած են պետութեան անվտանգութեան դէմ գաղտնի համագործակցութեամբ, ըստ թուրքիոյ քրէական օրէնսգիրքի 171րդ յօդուածին: 72 էջ ամբաստանագիրը պատրաստած է Անգարայի Պետական անվտանգութեան ատենակի նախկին դատախազը, որ վերջերս իր պաշտօնէն արձակուած էր սեռային գաղթականութեան մը պատճառով: Նշեալ հաստատու-

«Օրինակի համար, քաղաքական որոշ ուժի մը կամ ընդդէմադիր խմբակցութեան մը նեցուկ կանգնելը դիւանագիտական ներկայացուցիչներուն արտօնուած է: Այս պատճառով ալ ստեղծած են այս հաստատութիւններու դրու-թիւնը: Նպատակը վարչակարգին ընդդէմացողներուն հետ յարաբերութիւններ հաստատելն է, միաժամանակ առանց առիթ տալու քաղաքական մակարդակի տագնապի մը»:

Ամբաստանագիրը դիտել կը տայ, որ գերմանական հաստատութիւնները թէեւ կ'աւելնին գերմանական քաղաքական տարբեր կուսակցութիւններու, այսուհանդերձ ոչ կառավարական կազմակերպութիւններ են, որոնք կը գործեն Գերմանիոյ դեսպանին վերահսկողութեամբ: Անոնց նպատակն է միջամուխ ըլլալ երկրին ներքին խնդիրներուն եւ նոյնիսկ հակաշիտ հաստատել երկրին վարչակարգին վրայ, կը պնդէ թրքական ատենակ: «Գերմանական հաստատութիւնները կը շեշտեն թուրքիոյ մէջ ցեղային, կրօնական եւ դաւանական տարբերութիւններուն վրայ՝ փորձելով խորացնել զանոնք, տկարացնելու համար պետութիւնը, նշած է ամբաստանագիրը՝ աւելցնելով,

որ անոնց վերջնական նպատակը թուրքիոյ մէջ դաշնակցային համակարգի մը հաստատումն է՝ կեդրոնացեալ վարչա-ձեւին փոխարէն:

«ԹԵՐԵՒՈՅ ՏԵՅԼԻ ՆՈՒԹՁ»

**ԱՅՀԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿԸ, ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ, ST. MARC ԱԽՏԱԾԱՆԱԶՄԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՆԵՏ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ Կ'ԸՆԾԱՅԷ ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ՝ MAMMOGRAPHIE + ECHO 50000 L.Ո. ՓՈՒՄԱՆ 150000 L.Ո. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՆ ԱՅԿԻՆԻ ԳՐԱՍԵՆԱԿԻՆ ՄԵՋ, ԱՄԵՆ ՕՐ ՍՈՒՄՈՏԵՆ ԺԱՄԱՆ 8:30ԷՆ 4:30: ՍԱՆՍԱՆԱՓԱԿ ԹԻՌՈՎ ԿՏՐՈՆԵՐ**

ԱՅՍ ԱՌԻԹՈՎ ԻՒՐԱԳԱՆՉԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԶԵՐՕ-ՐԵՆ ՊԻՏԻ ՕԺՏՈՒՄ MEDNETԻ INFO-SANTE ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ՀԵՌԱԶԱՅԵԱՅԻՆ ՍՊԱՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՍԱՐԳՈՒԱՆ ՔԱՐՏՈՎ:

ԱՅՀԻԼ ԱՅԵՏԻ ԾԷՆՔ, Բ. ՅԱՐԿ ՀԵՌ. 242556/7

Խմբագրական «ԱՐԱՊ ՆՈՒԹՁ»-ի

# ՀԱՅ ԵՒ ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հայ եւ փորթուգալցի ժողովուրդներուն միջեւ ծագումնաբանական առնչութիւններուն, Փորթուգալի մէջ հայկական հին հետքերուն, հայ իշխանութիւնի մը Փորթուգալ հաստատման եւ անկէ սերած ընտանիքներուն ունեցած դերակատարութեան, փորթուգալցի կրօնաւորներու հայոց մէջ գործունէութեան, Կիլիկիոյ եւ Փորթուգալի արքունիքներուն ազգականական կապերուն ու եկեղեցական յարաբերութիւններուն անդրադարձած ենք նախապէս, առանձին յօդուածներով: Այդ յարաբերութիւնները շարունակեցին զարգանալ հետագային, երբ փորթուգալական խաչակիր ուժեր Արեւելք մտան, Ալյասի նաւահանգիստէն դէպի Փորթուգալ առեւտուրը աշխուժացաւ, իսկ Սանթիակո տը Գոմփոսթելայի սրբավայրը հայ եւ փորթուգալցի ուխտաւորներու հանդիպման կայանի վերածուցաւ: Իրենց մօր կողմէ հայկական ծագումով Քասթրօ ընտանիքին դերակատարութիւնը հետզհետէ աւելի շեշտուեցաւ:

## ՏԻՆԻՉ Ա. ԹԱԳԱՒՈՐ

Աֆոնսօ Գ. Թագաւորին յաջորդեց զաւակը՝ Տինիչ. ան ծնած էր 9 Հոկտեմբեր 1261ին եւ 1279ին գահ բարձրացաւ իբրեւ Փորթուգալի վեցերորդ թագաւոր:

Տինիչ, որ Ֆրանսական եւ քասթիլիական զորականութիւն ուսած բանաստեղծ էր, 1290ին Լիզբոնի մէջ Հիմը դրամ Փորթուգալի առաջին համալսարանին: Փորթուգալի եւ Քասթիլիոյ միջեւ վերջնական սահմանագիծ մը հաստատելու առաջադրանով՝ ան 1297ին Քասթիլիոյ հետ Ալբանիսէսի դաշինքը կնքեց, որուն հիմամբ Ալբանի վրայ Փորթուգալի գերիշխանութիւնը օրինական դարձաւ, երկու պետութիւններուն սահմանները ճշդուեցան եւ անոնց միջեւ քաղաքական միութիւն հռչակուեցաւ:

Տինիչ Ա. հետեւողական աշխատանք տարաւ արքունիքին հեղինակութիւնը զօրացնելու նպատակով. ան առաջին հերթին մասնաւոր օրէնքներ հրատարակեց՝ այդպէսով միջամտելով տեղական իշխանութիւններու գործերուն, որմէ ետք սկսաւ պայքարիլ ազնուական տուններուն դէմ՝ սահմանափակելու համար անոնց ուժը. տարիներու պայքարէ ետք ազնուականները ստիպուեցան տեղի տուին թագաւորին վճարական կեցուածքին առջեւ՝ ընդունելով արքունիքին գերիշխան կամբը: Տինիչ Ա. միաժամանակ պայքար մղեց հոգեւորականութեան դէմ, յատկապէս՝ հոգային հարցին շուրջ, որովհետեւ եկեղեցին տէր էր ընդարձակ կայունածներու, եւ թագաւորը տարբեր միջամտութիւններով աշխատեցաւ զբաւելլ անոնց մէջ վստահ:

## ՓՈՐԹՈՒԳԱԼՆ ԽԱՉԱԿԻՐՆԵՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԵՋ

Փորթուգալ Տինիչ Ա. թագաւորի քսանամեայ գահակալութեան տարիներուն ներքնապէս կազմակերպուած ու միաձոյլ կարեւոր ուժ դարձած էր. Տինիչ թագաւոր կ'աշխատէր նաեւ Փորթուգալը արտաքին քաղաքականութեան մէջ տիրական ներկայութեան վերածելու եւ ազդեցութեան գոտիներ տարածելու: Յարմար առիթը ներկայացաւ, երբ թաթարներուն կազան խանը, որ Կիլիկիոյ հայոց Հեթում Ա. թագաւորին դատեր հետ ամուսնացած էր, ուրացաւ իսլամութիւնը, ընդունեց քրիստոնէական հաւատքը եւ աներոջ թոռան՝ Հեթում Բ-ի դրոշմին վրայ պատերազմ յայտարարեց իսլամ սարակիստներուն դէմ՝ ազատագրելու համար Երուսաղէմը:

Պատերազմին ձեռնարկելով՝ կազան խան կողմէ զինուոր հաստատուած Տաճարական եւ Հիւրընկալներու միաբանութիւններուն, որպէսզի օգնեն իրեն:

Այս ժամանակ խառնակ վիճակի մատնուած էր Կիլիկիա. Հեթում Բ. թագաւոր 1296ին եղբոր՝ Սմբատի կողմէ գահընկէց եղած եւ բանտարկուած էր Բարձրբերդի մէջ, իսկ 1298ին



գահը գրաւած էր անոնց եղբայրը՝ Կոստանդին. գահակալական կուրուքներն օգտուելով՝ 1298ի գարնան եզրիպտական եւ շրջակայ ամիրայութիւններու զօրքերը նուաճեցին Կիլիկիոյ հարաւարեկեան շրջանները՝ շարք մը բերդաքաղաքներով: Բայց 1299ին հայ իշխանները գահին վրայ վերահաստատեցին Հեթում Բ-ը:

Արեւելքի այս խառնակ վիճակին եւ կազան

խանի ձեռնարկած պատերազմին լուրը առնելով՝ Տինիչ թագաւոր երեք հազար խաչակիր զինուորներ պատրաստեց եւ իր տան գլխաւոր բարապան Ժուան Սիմոնի գլխաւորութեամբ՝ 1299ի առաջին ամիսներուն զանոնք Արեւելք ղրկեց, որպէսզի երթան Սուրբ վայրերը՝ երկու տարուան համար, ծառայելով Աստուծոյ եւ իր հոգիի փրկութեան համար:

Փորթուգալական զօրքերը Արեւելք հասնելով՝ իրենց մասնակցութիւնը բերին կուրուքներուն. քրիստոնեայ բանակները յաղթական մուտք գործեցին Երուսաղէմ, որմէ ետք Հեթում Բ. 1300ի տարեվերջին յաղթական շքերթով մտաւ Երուսաղէմ, ուր 6 Յունուար 1301ին հանդիսաւորապէս տօնեց Քրիստոսի Մննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը: Այս առիթով հաւանաբար հայոց արքան ու փորթուգալցի խաչակիրները առիթը ունեցան հանդիպելու իրարու:

Բայց քրիստոնեայ բանակներուն յաղթանակը երկար չտեւեց, որովհետեւ 1301 Փետրուարին կազան խան հեռացաւ շրջանէն եւ Հեթում Բ., առանձին մնալով, ինք եւս ստիպուած վերադարձաւ Կիլիկիա:

## ՀԱՅԵՐ ՍԱՆԹՈՒԿՈ ՏԵ ՔՈՍՏՈՍԹԵԼԱՅԻ ՍՐԱՎԱՍՅՐԻՆ ՄԵՋ

Կալիցիոյ Սանթիակո տը Գոմփոսթելայ քաղաքի սրբավայրին մէջ պահպանուած Ս. Յարութի Առաքելի շիրմին ուխտագնացութիւնը՝ քրիստոնեայ աշխարհի չորս ծագերէն, նաեւ՝ Հայաստանէն ու Կիլիկիայէն, լայն ծաւալ ստացած էր: Ուխտաւորները յատուկ անցագրերով ստանալէ ետք ճամբայ կ'ելլէին եւ շարժվէին ու միմեկին մարտի ճամբորդելէ, երկիրներ, գիւղեր ու քաղաքներ անցնելէ եւ հիւսիսարեւմտեան Սպանիոյ՝ Ասթուրիոյ ու Կալիցիոյ իւրապատուկ բնութեամբ օժտուած, բարձր, վայրի ու ամալի, կանաչազարդ լեռները, ծովախորշերով կտրատուած գետերը, կիրճերն ու հովիտները կտրելէ ետք կը հասնէին Սանթիակո տը Գոմփոսթելայ. այն չնայ խարհիկ քաղաքը, որ մինչեւ հիմա ալ իր միջնադարեան աւանդական դիմագիծը պահած խորհրդաւոր քաղաք մըն է: Հոն տարբեր ազգերու պատկանող ուխտաւորներ օրեր ու շաբաթներ միասնաբար կրօնական արարողութիւններուն ու տօնախմբութիւններուն կը մասնակցէին եւ յետոյ կը վերադառնային իրենց երկիրները:

Հայ ուխտաւորները միշտ կարեւոր թիւ կը ներկայացնէին. անոնք հոն փորթուգալցի ուխտաւորներուն եւ տեղացիներուն հետ սերտ յարաբերութիւն մշակելու առիթ կ'ունենային. արդէն փորթուգալցիները միշտ ալ շատ մեծ բազմութեամբ կու գային սահմանազուխի վրայ գտնուող այս քաղաքը, իսկ տեղացի կալիցիացիներն ալ աւելի մօտ են փորթուգալցիներուն, քան՝ Սպանիոյ միւս երկրամասերու բնակիչներուն: Քոմփոսթելայի ուխտաւորներուն մէջ մեծ թիւով հայերու մասնակցութիւնը նկատի ունենալով՝ ԺԳ. դարու վերջաւորութեան կամ ԺԴ. դարուն սկիզբը հոն հասնելու յատուկ հիւանդանոց կառուցուեցաւ Երուսաղէմ անունով. անիկ կը գտնուէր քաղաքի պարիսպներէն դուրս, ներկայիս Երուսաղէմ կոչուող թաղամասին մէջ, Ապրիլի եւ Ֆիկէյրայի փողոցներուն վրայ: Հիւանդանոցը եպիսկոպոստն, աղքատներուն ապաստան տալու պայմանով:

## ՕՇԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՂՄԵ ՍՐՔՈՒՄ ԹԵՔԼԱՅԻ ՆՇԱՅԱՐԿԵՐՈՒՆ ՅԱՆՉՆՈՒՄԸ

